





ՏԵՂԵԿԱԼԸ

2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար)


Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %



■ Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով, մլն դրամ)
■ Արդյունաբերական արտադրանքը (ընթացիկ գներով, մլն դրամ)




■ Այլ ծառայություններ (ընթացիկ գներով, մլն դրամ)
■ Առևտրի շրջանառություն (ընթացիկ գներով, մլն դրամ)



Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)

■ Իրականացված շինարարության ծավալը
■ Արդյունաբերական արտադրանքը



Տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) 2019թ. հունվարին 2018թ. հունվարի համեմատ (աճողական) կազմել է 106% այն դեպքում երբ 2018թ. հունվարին 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ եղել է 111.6%, իսկ 2017թ. հունվարին 2016թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 107.7%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվարին կազմել է 123,333.2 մլն.դրամ, ինչը 4,921.4 մլն. դրամով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ և 15,210.7 մլն դրամով ավել է 2017թ. հունվարի համեմատությամբ:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվարին կազմել է 10,766.2 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թթ, նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 1,432.5 և 3,201.0 մլն. դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2019թ. հունվարին կազմել է 187,801.6 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 31,309.8 և 59,042.3 մլն. դրամով:

Այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվարին կազմել է 130,526.3 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թթ, նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 19,081.5 և 34,305.8 մլն. դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվարին 2018թ. հունվարի համեմատությամբ կազմել է 99.4%, 2018 և 2017 թթ, նույն ժամանակաշրջանների 113.9%-ի, 2017 և 2016 թթ. նույն ժամանակաշրջանների 112.2%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2019թ. հունվարին 2018թ. հունվարի համեմատությամբ կազմել է 122.1%, 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների 119.7%-ի, 2017 և 2016 թվականների նույն ժամանակաշրջանների 94.7%-ի պարագայում:

* Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ցուցանիշը բացակայում է, քանի որ 2019թ. դրա ամփոփումը կատարվելու է եռամսյակային կտրվածքով




ՏԵՂԵԿԱԼՔ


2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար)

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)

- Այլ ծառայություններ
- Առևտրի շրջանառություն



- Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում (ընթացիկ գներով, մլն դրամ)
- Մշակող արդյունաբերություն (ընթացիկ գներով, մլն դրամ)
- Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում (ընթացիկ գներով, մլն դրամ)
- Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում (ընթացիկ գներով, մլն դրամ)



Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվարին կազմել է 23,225.3 մլն.դրամ, ինչը 6,125.1 մլն. դրամով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ և 599.2 մլն դրամով ավել է 2017թ. հունվարի համեմատությամբ:


Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվարին կազմել է 74,674.1 մլն.դրամ, ինչը 5,537.6 մլն. դրամով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ և 21,067.3 մլն դրամով ավել է 2017թ. հունվարի համեմատությամբ:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվարին կազմել է 23,420.1 մլն.դրամ, ինչը 4,260.7 մլն. դրամով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ և 6,536.2 մլն դրամով պակաս է 2017թ. հունվարի համեմատությամբ:


Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվարին կազմել է 2,013.7 մլն.դրամ, ինչը 73.2 մլն. դրամով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ և 80.4 մլն դրամով ավել է 2017թ. հունվարի համեմատությամբ:

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)

- Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում
- Մշակող արդյունաբերություն
- Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում
- Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում
- Ֆինանսական և ապահովագրական գործունեություն (ընթացիկ գներով, մլն դրամ)
- Տեղեկատվություն և կապ (ընթացիկ գներով, մլն դրամ)
- Մշակույթ, զվարճություններ և հանգիստ (ընթացիկ գներով, մլն դրամ)



- Ֆինանսական և ապահովագրական գործունեություն (ընթացիկ գներով, մլն դրամ)
- Տեղեկատվություն և կապ (ընթացիկ գներով, մլն դրամ)
- Մշակույթ, զվարճություններ և հանգիստ (ընթացիկ գներով, մլն դրամ)



Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվարին 2018թ. հունվարի համեմատությամբ կազմել է 90.2%, 2018 և 2017 թթ. նույն ժամանակաշրջանների 109.8%-ի, 2017 և 2016 թվականների նույն ժամանակաշրջանների 97.2%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվարին 2018թ. հունվարի համեմատությամբ կազմել է 105.9%, 2018 և 2017 թթ. նույն ժամանակաշրջանների 127.8%-ի, 2017 և 2016 թվականների նույն ժամանակաշրջանների 119.4%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվարին 2018թ. հունվարի համեմատությամբ կազմել է 93.3%, 2018 և 2017 թթ. նույն ժամանակաշրջանների 92.6%-ի, 2017 և 2016 թթ. նույն ժամանակաշրջանների 111.3%-ի պարագայում:


Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2019թ. հունվարին 2018թ. հունվարի համեմատությամբ կազմել է 96.7%, 2018 և 2017 թթ. նույն ժամանակաշրջանների 104.8%-ի, 2017 և 2016 թթ. նույն ժամանակաշրջանների 106.8%-ի պարագայում:




ՏԵՂԵԿԱԼՔ

2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար)

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվարին կազմել է 33,796.7 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 10,667.6 և 12,914.3 մլն. դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվարին կազմել է 19,519.1 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 721.8 և 2,061.2 մլն. դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2019թ. հունվարին կազմել է 32,299.0 մլն.դրամ, ինչը 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 5,036.0 և 10,640.7 մլն. դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվարին 2018թ. հունվարի համեմատությամբ կազմել է 144.1%, 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների 111.5%-ի, 2017 և 2016 թվականների նույն ժամանակաշրջանների 114.2%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվարին 2018թ. հունվարի համեմատությամբ կազմել է 103.8%, 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների 107.3%-ի, 2017 և 2016 թվականների նույն ժամանակաշրջանների 108.8%-ի պարագայում:


Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2019թ. հունվարին 2018թ. հունվարի համեմատությամբ կազմել է 116.3%, 2018 և 2017 թվականների նույն ժամանակաշրջանների 125.9%-ի, 2017 և 2016 թվականների նույն ժամանակաշրջանների 111.1%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2019թ. հունվարին 2018թ. հունվարի նկատմամբ կազմել է 100.6%, 2018թ. հունվարին 2017թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 102.7%, 2017թ. հունվարին 2016թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 99.4%:

Չուտ միջազգային պահուստները (ՉՄՊ) 2019թ. հունվարի վերջի դրությամբ կազմել է 560,597.0 մլն դրամ, ինչը 79,410.0 մլն. դրամով կամ 14.2%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 49,460.0 մլն. դրամով կամ 8.8%-ով պակաս է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:


Աշխատանք փնտրողների թիվը 2019թ. հունվարի դրությամբ կազմել է 81914 մարդ, ինչը 3381 մարդով կամ 4.1%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 13897 մարդով կամ 17%-ով պակաս է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2019թ. հունվարի դրությամբ կազմել է 64631 մարդ, ինչը 5183 մարդով կամ 8%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 15903 մարդով կամ 24.6%-ով պակաս է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Չուտ միջազգային պահուստներ (ՉՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ



Աշխատանք փնտրողներ, ընդամենը ժամանակաշրջանի վերջին ամսվա դրությամբ, մարդ

Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը, ընդամենը ժամանակաշրջանի վերջին ամսվա դրությամբ, մարդ







ՏԵՂԵԿԱԼՔ

2017-2019թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար)

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2019թ. հունվարին կազմել է 443.2 մլն. դոլար, ինչը 57.6 մլն. դոլարով կամ 13%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 101.5 մլն. դոլարով կամ 29.7%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:


Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2019թ. հունվարին կազմել է -152.3 մլն. դոլար, ինչը 3.4 մլն. դոլարով կամ 2.2%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 54 մլն. դոլարով կամ 54.9%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕՔ գներով) 2019թ. հունվարին կազմել է 145.4 մլն դոլար, ինչը 27.2 մլն. դոլարով կամ 18.7%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 23.7 մլն. դոլարով կամ 19.5%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:


Ներմուծման ծավալը (ՄԻՖ գներով) 2019թ. հունվարին կազմել է 297.7 մլն դոլար, ինչը 30.5 մլն. դոլարով կամ 10.2%-ով պակաս է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 77.7 մլն. դոլարով կամ 35.3%-ով ավել է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2019թ. հունվարին կազմել է 172357 դրամ, ինչը 6983 դրամով կամ 4.2%-ով ավել է 2018թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 7997 դրամով կամ 4.6%-ով պակաս է 2017թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և պակասուրդը/հավելուրդը, մլն դրամ



Պետական բյուջեի պակասուրդի/հավելուրդի ֆինանսավորման ներքին և արտաքին աղբյուրները, ընթացից գներով, մլն դրամ

